

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխությունները 2002թ. հոկտեմբերին, ըստ Հայաստանի Հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(%-ներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	102.2	102.9	101.0	99.5	101.8	101.2
Փետրվար	99.3	100.8	99.8	100.1	95.8	100.2
Մարտ	99.4	99.6	100.0	100.5	99.5	97.7
Ապրիլ	102.5	99.8	99.6	101.2	98.8	101.4
Մայիս	101.7	101.6	100.1	100.8	100.4	100.8
Հունիս	99.5	106.1	100.2	100.3	73.3	100.4
Հուլիս	95.0	98.3	100.0	99.6	80.6	104.7
Օգոստոս	97.0	99.4	100.0	97.0	75.4	99.9
Սեպտեմբեր	99.4	99.3	100.4	99.5	94.9	95.6
Հոկտեմբեր	100.5	100.1	100.0	103.7	104.7	98.3
Հոկտեմբերը 2001թ. դեկտեմբերի նկատմամբ	96.3	103.1*	101.1	102.2	87.0*	99.4
2002թ. հունվար- հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	101.0	103.0	104.4	103.1	102.6	100.8

*) 2002թ. հոկտեմբերի և 2001թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 255 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:


³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2001-2002թթ. հոկտեմբերին (% -ով, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-հոկտեմբերին»

Գների միջին ամսական փոփոխությունները 2000-2002թթ. հունվար-հոկտեմբերին՝ ըստ ՀՀ տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի

(%-ով)


	2000	2001	2002
Սպառողական գների ինդեքս	99.7	99.95	99.6
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	99.5	99.9	99.4
ոչ պարենային ապրանքների	100.1	100.05	100.2
ծառայությունների	100.15	100.05	100.15
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	100.15	99.95	100.3
Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում	100.1	100.4	100.1
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս	100.2	99.95	100.2
Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս	97.4	98.0	98.6
Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս	100.3	99.5	99.95

Արտարժույթային շուկա: 2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 0.5% և 3.3% հավելած:

2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցված սպառողական գների 3.7% գնանկումն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 3.0% հավելածով: 2001թ. նույն ժամանակահատվածում նկատվել է նմանատիպ միտում և սպառողական գների 0.8% նվազմանը զուգահեռ արձանագրվել է հաշվարկային փոխարժեքի 1.1% հավելած: 2002թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը կազմել է 581.43 դրամ, ինչը 3.7%-ով գերազանցել է 2001թ. հոկտեմբերին արձանագրված համապատասխան ցուցանիշը (560.59 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2001-2002թթ. հունվար-հոկտեմբերին

(%-ով, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)




Սպառողական գներ: 2002թ. հունիս-սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 8.9% ընդհանուր գնանկմանը հոկտեմբերին հաջորդել է 0.5% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային (հատկապես գյուղատնտեսական) որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով, ինչպես նաև արժույթային շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելածով:

2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնաճը կազմել է 0.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 1.5%, իսկ ծառայությունների սակագների հավելածը՝ 0.3%:

2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 96.3%, ինչը 2.9 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (99.2%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը նշված ժամանակահատվածում կազմել է 94.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.7%, ծառայությունների սակագներինը՝ 101.4%:


2002թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.4%, ինչը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ամսական նվազումը (0.1%):

Սպառողական գների հավելածը 1995-2002թթ. հոկտեմբերին
(%-ով, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



2002թ. հոկտեմբերին 2001թ. հոկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.8%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99.1%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.7%, ծառայությունների սակագներինը՝ 101.5%, իսկ հունվար-հոկտեմբերին 2001թ. հունվար-հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 101.0%, 101.2, 99.9 և 101.0%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2002թ. հունվար-հոկտեմբերին
(%-ով նախորդ ամսվա համեմատ)



Պարենային ապրանքների գներ: 2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների գնանկումը կազմել է 5.7%՝ 3.4 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված գնանկումը (2.3%): Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 11-ում հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 40.5-0.1% գնանկում, ինչով էլ հիմնականում բացատրվում է նշված ժամանակահատվածում սպառողական շուկայում արձանագրված ընդհանուր գնանկման երևույթը:


2002թ. հունիս-սեպտեմբերին արձանագրված պարենային ապրանքների 14.0% ընդհանուր գնանկմանը հոկտեմբերին հաջորդել է 0.3% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է ձվի, ձկնամթերքի և բանջարեղենի ապրանքախմբերում արձանագրված նկատելի գնաճով:

2002թ. մայիս-օգոստոսին արձանագրված ձվի 31.3% գնանկմանը սեպտեմբեր-հոկտեմբերին հաջորդել է 15.4% գնաճ, այդ թվում հոկտեմբերին այն կազմել է 10.9%: Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում գրանցվել է ձվի 4.5-22.5% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում): Երևանում ձվի գնաճը կազմել է 9.9%:

Ձկնամթերքի ապրանքախմբում 2002թ. մայիս-սեպտեմբերին արձանագրված 62.5% գնանկումը հոկտեմբերին փոխակերպվել է գնաճի և կազմել 3.7%, ինչը հիմնականում թարմ «սիգ» տեսակի ձկան 4.7% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում ձկնամթերքի գնաճը կազմել է 3.8-15.0% (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Գյումրիում): Մյուս 4 քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 10.1-1.0% գնանկում, իսկ ք. Վաղարշապատում պահպանվել է գների անփոփոխ մակարդակ:

2002թ. հունիս-օգոստոսին բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 52.2% ընդհանուր գնանկմանը սեպտեմբեր-հոկտեմբերին հաջորդել է 6.2% գնաճ, այդ թվում հոկտեմբերին գնաճը կազմել է 3.2%: Վերջինս հիմնականում վարունգի (76.9%), լոլիկի (52.7%), կանաչ պղպեղի (26.7%), սխտորի (14.1%), սմբուկի (11.1%) զգալի գնաճի արդյունք է: Նշված ժամանակահատվածում կաղամբի գինն աճել է 8.5%, կանաչ լոբունը՝ 5.3%, կարտոֆիլինը՝ 3.3%: Հանրապետությունում դիտարկված 4 քաղաքներում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 4.8-17.4% գնաճ (ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Դիլիջանում), իսկ մյուս 6-ում՝ 9.1-0.2% գնանկում:

Բանջարեղենի գների ամսական փոփոխությունները 2000-2002թթ. հունվար-հոկտեմբերին
(%-ով, նախորդ ամսվա նկատմամբ)




Կենդանական և բուսական յուղի, կաթնամթերքի, ոչ ոգելից խմիչքի, այլ մթերքի գները հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել են 0.1-0.3%, իսկ հացամթերքի և հրուշակեղենի գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում արձանագրվել է 0.1% գնաճ, ընդ որում ոգելից խմիչքի գներն աճել են 0.2%, իսկ ծխախոտինը՝ 0.1%:

Մրգի ապրանքախմբում 2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 1.6% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.4% գնաճի դիմաց: Հուլիս-հոկտեմբեր ամիսներին (սեզոնայնությամբ պայմանավորված) հանրապետությունում արձանագրվել է մրգի 39.6% ընդհանուր գնանկում, ընդ որում հոկտեմբերին գնանկումը կազմել է 2.9%: Դրան մեծապես նպաստել է խաղողի (18.1%), խնձորի (11.1%), տանձի (7.6%), ինչպես նաև արևադարձային պտուղներից ադամաթզի (14.9%) գնանկումը: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում մրգի գները նվազել են 10.3-2.4% (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում), իսկ մյուս 3 քաղաքներում գրանցվել է 4.3-15.6% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2000-2002թթ. հունվար-հոկտեմբերին

(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)



Մսամթերքի ապրանքախմբում 2002թ. օգոստոս-հոկտեմբերին արձանագրվել է 5.3% գնանկում, այդ թվում հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ այն կազմել է 1.1%, պայմանավորված ոչխարի (7.8%), խոզի (2.5%) և տավարի (1.8%) մսի գնանկումով: Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում մսամթերքի գները նվազել են 2.3-0.4%: Մսամթերքի գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում: Շաքարավազի և սուրճի, թեյի, կակաոյի գները հանրապետությունում նվազել են համապատասխանաբար 0.5% և 0.3%:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			
	հոկտեմբերը			հունվար- հոկտեմբերը 2001թ. հունվար- հոկ- տեմբերի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ	
Պարենային ապրանքներ				
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	94.0	100.3	99.1	101.2
Պարենային ապրանքներ	94.3	100.3	100.6	102.1
հացամթերք	97.7	100.0	97.6	97.8
մսամթերք	98.0	98.9	99.1	101.6
ձկնամթերք	59.5	103.7	91.3	151.5
կաթնամթերք	96.7	100.3	99.3	100.3
ձու	89.8	110.9	96.5	107.2
կենդանական և բուսական յուղ	97.9	100.1	101.2	101.6
միրգ	98.4	97.1	127.5	120.6
բանջարեղեն և կարտոֆիլ	78.4	103.2	112.4	102.4
շաքարավազ	97.3	99.5	92.5	99.4
սուրճ, թեյ, կակաո	97.6	99.7	97.6	98.5
հրուշակեղեն	100.1	100.0	102.3	101.3
այլ մթերքներ	99.9	100.1	99.8	99.9
ոչ ոգելից խմիչք	102.1	100.1	102.4	100.5
Ոգելից խմիչք և ծխախոտ	91.5	100.1	91.4	94.4

Ոչ պարենային ապրանքների գներ: 2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրված 1.5% գնաճին մեծապես նպաստել է վառելիքի ապրանքախմբում գրանցված 9.7% գնաճը: Վերջինս հեղուկ գազի և վառելափայտի համապատասխանաբար 10.8% և 17.0% գնաճի արդյունք է: Նշված ժամանակահատվածում 0.3-2.6% գնաճ է արձանագրվել նաև մշակույթի ապրանքների, խոհանոցային սպասքի, գորգեղենի, տեքստիլեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, կոշկեղենի, գեղահարդարման, ոսկերչական ապրանքների, կահույքի, հագուստի և կտորեղենի ապրանքախմբերում: Անձնապիտո ապրանքների գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ, իսկ մյուս դիտարկվող ապրանքախմբերում գները նվազել են 0.8-0.1%:

2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրվել է բենզինի 2.5% գնաճ և դիզելային վառելիքի 0.2% գնանկում: 2001թ. դեկտեմբերի համեմատ բենզինի գնաճը կազմել է 7.9%, իսկ դիզելային վառելիքի գները նվազել են 1.1%-ով:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները (%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			հունվար- հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	հոկտեմբերը			
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ	101.7	101.5	100.7	99.9
<i>այդ թվում՝</i>				
հագուստ և կտորեղեն	102.5	102.6	103.2	101.5
վառելիք	105.1	109.7	106.5	96.9
կահույք	100.5	101.3	101.5	102.1
գորգեղեն	100.9	100.4	101.1	101.1
տեքստիլեղեն	96.6	100.4	96.6	99.0
կենցաղային էլեկտրաապրանքներ	98.5	100.5	98.0	98.1
խոհանոցային սպասք	100.9	100.4	101.1	103.0
լվացամիջոցներ	99.6	99.9	101.2	105.1
շինանյութեր	99.1	99.8	98.4	99.4
այգեգործական ապրանքներ	97.7	99.3	97.3	98.6
դեղամիջոցներ	94.7	99.6	94.1	93.5
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	106.2	102.1	99.3	95.3
մշակույթի ապրանքներ	101.3	100.3	101.4	101.6
գրենական պիտույքներ	101.7	99.2	102.4	103.8
գեղահարդարման ապրանքներ	101.1	100.5	101.7	101.4
ոսկերչական ապրանքներ	105.4	102.6	105.5	102.3
անձնապիտո ապրանքներ	100.9	100.0	100.9	100.5

Ծառայությունների սակագներ: 2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցված ծառայությունների սակագների 0.3% հավելաճին մեծապես նպաստել է կապի ծառայությունների սակագների 2.2% հավելաճը: Վերջինս պայմանավորվել է հանրապետությունից դուրս հեռախոսային խոսակցությունների սակագների 4.2% հավելաճով: Նշված ժամանակահատվածում կրթության համակարգի և կենցաղային ծառայությունների սակագների հավելաճը կազմել է համապատասխանաբար 1.6% և 0.1%: Հանգստի կազմակերպման ծառայությունների սակագները նվազել են 0.7%, իսկ բնակարանային-կոմունալ, բուժապասարկման, տրանսպորտի, մշակույթի, հանրային սննդի, իրավական ու բանկային ծառայությունների ոլորտում ընդհանուր առմամբ պահպանվել է սակագների անփոփոխ մակարդակ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			
	<i>հոկտեմբերը</i>			հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ	
1 առայություններ, ընդամենը	101.4	100.3	101.5	101.0
<i>այդ թվում.</i>				
կենցաղային	100.0	100.1	100.5	101.0
բնակարանային-կոմունալ	100.1	100.0	100.1	100.0
բուժսպասարկման	98.9	100.0	98.0	96.2
տրանսպորտի	100.0	100.0	100.0	100.2
կապի	114.3	102.2	115.4	109.4
մշակույթի	119.1	100.0	119.0	114.6
կրթության համակարգի	102.1	101.6	102.5	104.2
հանգստի կազմակերպման	107.5	99.3	105.9	106.0
հանրային սննդի	99.6	100.0	99.5	100.0
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետության դիտարկվող 8 քաղաքներում սպառողական գներն աճել են 0.1-1.4%-ով (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Թալինում), իսկ Վանաձոր և Եղեգնաձոր քաղաքներում գրանցվել է սպառողական գների անփոփոխ մակարդակ:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2002թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուր, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, ընդամենը	1100	1252	1339	611	416	253	142	119	76	204
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1083	1308	1363	625	402	253	152	124	87	193
Գյումրի	1025	1225	1300	580	413	258	138	110	45	188
Վանաձոր	1083	1000	1250	610	386	245	133	106	52	220
Վաղարշապատ	1200	1150	1150	530	450	250	130	90	60	180
Թալին	1200	1200	1400	560	400	245	140	110	70	250
Դիլիջան	1200	1200	1300	576	425	260	150	120	60	275
Հրազդան, Չարենցավան	1200	1250	1300	620	450	255	120	110	60	200
Եղեգնաձոր	1100	1300	1400	600	500	250	130	150	100	200
Մարտունի	1000	1200	1400	650	500	260	105	120	70	250
Կապան	1160	1200	1500	566	450	262	138	138	90	270

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2002թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5512 դրամ, ինչը գերազանցել է նույնաժամանակահատվածի 2001թ. հոկտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը 1.8%-ով (5417 դրամ):

Հանրապետությունում դիտարկվող բոլոր քաղաքներում 2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.7-1.9% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր մակարդակը արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 1.8%:

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները 2002թ. հոկտեմբերին ըստ դիտարկվող քաղաքների

(%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ)

	Հագուստ և կտորե- ղեն	Կոշիկե- ղեն	Վառե- լիք	Դեղամի- ջոցներ	Կենցաղա- յին էլեկ- տրաապ- րանքներ	Սշակույ- թի ապ- րանքներ	Գրենա- կան պի- տույքներ	Գեղահար- դարման ապրանք- ներ
ՀՀ, ընդամենը	102.5	102.9	105.1	94.7	98.5	101.3	101.7	101.1
<i>այդ թվում</i>								
Երևան	103.9	103.8	108.8	95.3	99.0	102.8	101.6	102.1
Գյումրի	101.6	99.7	114.8	95.9	98.5	99.8	99.1	100.8
Վանաձոր	99.8	103.5	102.4	91.2	98.2	98.0	105.1	96.8
Վաղարշապատ	99.6	98.5	96.7	95.0	101.5	100.5	101.2	99.3
Թալին	99.2	98.9	96.2	94.3	99.0	99.1	102.4	96.6
Դիլիջան	99.8	103.2	105.8	87.6	99.3	100.2	100.0	103.9
Հրազդան, Չարենցավան	101.3	101.4	93.2	90.4	91.5	98.6	99.6	102.6
Եղեգնաձոր	104.2	102.9	98.2	97.2	100.2	102.0	92.9	96.0
Սարտունի	101.0	105.8	98.3	98.3	100.0	98.9	108.6	100.9
Կապան	101.6	100.7	83.9	98.6	94.9	100.0	101.0	96.4

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2002թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է սակագների 0.1-0.4% հավելաճ, իսկ ք. Գյումրիում՝ 0.6% նվազում:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2002թ. հոկտեմբերին ըստ դիտարկվող քաղաքների և ապրանքախմբերի

(%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ)

	Սպառողական գների ինդեքսը	սպառողա- կան ապ- րանքների	այդ թվում			ծառայու- թյունների
			դրանցից			
			պարենային ապ- րանքների (ներառ- յալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	96.3	95.4	94.0	94.3	101.7	101.4
<i>այդ թվում</i>						
Երևան	96.3	95.4	93.8	94.1	102.5	101.6
Գյումրի	96.9	95.7	94.6	94.6	100.5	103.9
Վանաձոր	96.4	95.6	94.4	94.8	101.1	100.7
Վաղարշապատ	95.4	94.5	93.5	93.9	99.1	100.2
Թալին	95.8	94.6	93.3	93.7	100.1	102.5
Դիլիջան	97.1	96.6	95.8	96.6	100.0	100.0
Հրազդան, Չարենցավան	96.3	95.6	94.5	94.8	100.4	99.9
Եղեգնաձոր	95.6	94.7	93.2	93.4	101.6	100.9
Սարտունի	95.5	94.5	92.8	93.1	101.9	101.3
Կապան	97.0	96.4	95.5	96.7	100.4	100.6

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 3.1%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.5% գնանկման դիմաց:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			2001թ. հունվար-հոկտեմբերը 2000թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	<i>հոկտեմբերը</i>		հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ		
Ամբողջ արդյունաբերությունը	100.1	104.3	103.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
էլեկտրաէներգետիկա	103.0	100.8	101.4	98.9
գունավոր մետալուրգիա	94.4	132.6	121.3	99.2
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	102.6	91.6	102.8	99.2
մեքենաշինություն	102.5	98.9	97.5	110.0
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	103.4	106.3	95.4	120.6
անտառային, փայտամշակման, թղթի-ցեյտուղոզի արդյունաբերություն	97.3	100.1	97.5	111.1
շինանյութերի արդյունաբերություն	103.1	99.2	97.7	101.6
թեթև արդյունաբերություն	87.4	101.2	105.3	97.2
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	100.1	98.7	99.8	98.7
հրատարակչական գործերի արտադրություն	102.3	102.3	105.2	90.7

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 2.2% հավելած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.2% նվազման դիմաց:


Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները

(%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			
	<i>հոկտեմբերը</i>			հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ	
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս - ընդամենը	102.2	103.7	104.3	103.1
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	102.5	104.3	104.6	103.2
ավտոմոբիլային տրանսպորտով	100.1	100.0	96.4	99.8
օդային տրանսպորտով	99.9	99.9	100.9	101.8
խողովակաշարային տրանսպորտով	102.3	103.8	104.5	103.2

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսները: 2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերքի իրացման 13.0% գնանկում, իսկ 2002թ. սեպտեմբերի համեմատ՝ 4.7% գնաճ:

**Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում
2002թ. հոկտեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)**



2002թ. հունիս-սեպտեմբերին հանրապետությունում արձանագրված բուսաբուծական մթերքի գնանկմանը հոկտեմբերին հաջորդել է 5.9% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է հացահատիկային մշակաբույսերի (10.3%), բանջարեղենի (9.5%), կերային մշակաբույսերի (6.3%) իրացման գնաճով: Մրգի իրացման գները նշված ժամանակահատվածում աճել են 2.8%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1998- 2002թթ. հոկտեմբերին

(դրամ)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002
Ցորեն	կգ	104	95	97	100	81
Փարի	- „,-	102	70	67	72	73
Լոբի	- „,-	300	319	311	396	406
Կարտոֆիլ	- „,-	91	80	77	85	93
Կաղամբ	- „,-	44	36	54	33	33
Գազար	- „,-	53	45	53	50	47
Գլուխ սոխ	- „,-	87	59	66	72	61
Խնձոր	- „,-	97	70	40	57	55
Տանձ	- „,-	113	126	88	132	115
Խաղող		138	92	80	93	104
Մեղր	- „,-	2548	2382	2538	2548	2199
Միս տավարի	- „,-	864	845	704	812	870
Ոչխարի	- „,-	861	794	734	802	838
Խոզի	- „,-	1209	903	976	1074	916
Կաթ	լ	119	111	109	117	102
Մածուն	- „,-	171	168	169	175	172
Պանիր (յուղոտ)	կգ	917	872	794	846	746
Չուլ	հատ	50	47	40	40	42
Միամյա խոտեր	կգ	26	17	27	19	18
Բազմամյա խոտեր	- „,-	27	24	25	25	28

2002թ. հոկտեմբերին շարունակվել է նախորդ երկու ամիսներին հանրապետությունում գրանցված անասնապահական մթերքի գնաճի միտումը և արձանագրվել է 2.6% գնաճ: Վերջինս կաթնամթերքի (4.1%), ձկնի (4.2%), բրդի (15.2%) գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկվող 8 մարզերում գրանցվել է անասնապահական մթերքի 0.8-7.1% գնաճ:

Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			2001թ. հունվար-հոկտեմբերը 2000թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	<i>հոկտեմբերը</i>		հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	104.7	101.2	102.6	110.4
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	102.2	104.5	102.1	108.5
Արարատ	105.5	115.0	112.2	106.9
Արմավիր	106.0	95.5	107.8	110.7
Գեղարքունիք	110.3	101.7	103.5	112.9
Լոռի	103.0	97.9	97.7	107.7
Կոտայք	95.0	99.8	98.9	101.5
Շիրակ	99.6	96.0	95.6	113.5
Սյունիք	103.9	98.2	95.4	107.2
Վայոց ձոր	95.2	100.8	99.0	107.5
Տավուշ	100.5	94.4	95.1	105.4

2002թ. հոկտեմբերին 2001թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գնանկումը կազմել է 0.6%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 1.7%: Վերջինս հիմնականում բույսերի պաշտպանության միջոցների, սերմացուների և տնկիների, էներգիայի և քսայուղերի 13.0-3.3% գնման գնանկման արդյունք է: Դրան զուգընթաց, գյուղատնտեսության վճարովի ծառայությունների, շինանյութերի, ամասնակերի, գյուղատնտեսական մանր գործիքների, պարարտանյութերի և անասունների ապրանքախմբերում գրանցվել է 2.2-12.8% գնման գնաճ, իսկ մեքենասարքավորումների և պահեստամասերի գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Գյուղատնտեսական մթերքի արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%-ով)

	2002 թ վ ա կ ա ն ի			2001թ. հունվար-հոկտեմբերը 2000թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	<i>հոկտեմբերը</i>		հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	
	2002թ. սեպտեմբերի նկատմամբ	2001թ. հոկտեմբերի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	98.3	101.7	100.8	103.8
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	99.9	99.9	100.7	106.4
Արարատ	105.0	102.9	102.4	105.6
Արմավիր	98.9	99.2	98.3	107.5
Գեղարքունիք	94.7	102.3	102.3	96.3
Լոռի	97.3	97.1	99.4	99.8
Կոտայք	89.7	97.1	98.1	109.3
Շիրակ	103.1	97.4	98.8	103.0
Սյունիք	106.2	95.9	97.7	102.4
Վայոց ձոր	97.9	98.6	97.3	96.6
Տավուշ	100.4	101.4	99.5	107.4